ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով օդորակիչների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՕԴ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.05.2020թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Է.Արշակյանը, Մ.Անտոնյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՕԴ-20/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **''Էյչ վի էյ սի սերվիս'' ՍՊԸ (ՀՀ, մ. Արարատ, գ. Սուրենավան, Արցախի 15տ)**

2. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
				''Էյչ վի էյ սի սերվիս'' ՍՊԸ
1	օդորակիչ	6	810000	675000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ

ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

1. Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **''Էյչ վի էյ սի սերվիս'' ՍՊԸ** -ին,
2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի հայտարարվում:
3. Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
4. «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՕԴ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Է.Արշակյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան